ՎԱՉԳԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՉԱԼՈՅԱՆ

Հայաստանի փիլիսոփայական գիտությունը ծանր կորուստ կրեց։ 1981 թ. մարտի 24-ին վախճանվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վաչգեն Կարապետի Չալոյանը։ Կյանքից հեռացավ ականավոր գիտնականը, սովետահայ պատմափիլիսոփայական գիտության հիմնադիրներից մեկը։

Վ. Չալոյանը ծնվել է 1905 թ. հունվարի 7-ին, Ալեքսանդրապոլում (Լենինական), բանվորի ընտանիքում։ Երիտասարդության տարիները համընկան Հայաստանում սովետական կարգերի հաստատման, սոցիալիստական շինարարության և ազգային զարթոնքի ժամանակաշրջանին։ Վ. Չալոյանը Երևանի նորաստեղծ պետական համալսարանի առաջին սաներից էր։ 1926 թ. ավարտելով համալսարանը, նա մանկավարժական աշխատանք է կատարել հանրապետության միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում, այնուհետև որոշ ժամանակ եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրենը։ Հայ ժողովրդի հարուստ անցյալի, նրա հոգևոր մշակույթի հանդեպ ունեցած մեծ սերն ու հետաքրքրությունը, գիտնականի բնատուր խառնվածքը Վ. Չալոյանին մղում են հայագիտության ասպարեզ։ Կատարելագործելով իր գիտելիքները Մոսկվայի փիլիսոփայության և գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում, նա 1938 թ. սկսած մինչև կյանքի վերջը ամբողջությամբ նվիրվում է փիլիսոփայական մտքի պատմության հետազոտման դրծին, դառնալով հայ միջնադարագիտության այդ նոր բնագավառի հիմնադիրը։

Արդեն իր առաջին՝ «5-րդ դարի հայ փիլիսոփա Եղնիկ Կողբացու ուսմունքի շուրջ» ուսումնասիրության մեջ (1940) Վ. Չալոյանը առաջադրեց հին և միջնադարյան հայ մտածողների փիլիսոփայական հայացքների հետազոտման անհրաժեշտության հարցը, ապացուցելով, որ հայ դպրության ձևավորման շրջանից սկսած, մյուս գիտությունների զարգացմանը զուգահեռ իր պատվավոր տեղն ուներ նաև փիլիսոփայությունը։ Շարունակելով եռան-

ղուն հետազոտական աշխատանքը, Վ. Զալոյանը 1946 թ. հրատարակեց իր երկրորդ՝ «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» աշխատությունը, որտեղ փայլուն կերպով ապացուցեց հայ փիլիսոփայական մտքի ոչ միայն գոյությունը, այլև հարուստ ավանդույթների առկայությունն ու բարձր մակարդակը, մեր հոգևոր մշակույթի պատմության մեջ նրա խաղացած կարևոր դերը։ Այնուհետև Վ. Զալոյանը Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի հիման վրա լուսաբանեց մինչ այդ անհայտ մի շարք հայ մտածողների փիլիսոփայական ժառանգությունը և 1959 թ. լույս ընծայեց իր գլուխգործոցը՝ «Հայոց փիլիսոփայության պատմությունը», մի հիմնարար աշխատություն, որը վերջնականապես հաստատեց փիլիսոփայության տեղն ու իրավունքները հայագիտության բնագավառում և հայ փիլիսոփայական միտքը դուրս բերեց համամիութենական ու միջազգային ասպարեզ։

Վ. Զալոյանին մեծ ճանաչում բերեցին նաև «Հայկական ռենեսանս» և «Արևելք-Արևմուտք» աշխատությունները, որոնք լույս ընծայվեցին Երևանում, Մոսկվայում և արտասահմանում։ Նա կարևոր նշանակություն էր տալիս հայ փիլիսոփայական մտքի հուշարձանների հրատարակությանը և թարգմանություններին։ 1956 թ. նա սովետահայ գիտության մի այլ երախտավորի՝ Արշակ Ադամյանի, հեղինակակցությամբ հրատարակեց Հովհան Որոտնեցու «Վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» աշխատության ռուսերեն թարգմանությունը, հիմք դնելով հայ փիլիսոփայական մտքի հուշարձանների հրատարակության մատենաշարին։ 1968 թ. նա լույս ընծայեց Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» ռուսերեն թարգմանությունը։ Վ. Զալոյանը եռանդուն մասնակցություն է ունեցել Մոսկվայում հրատարակված «Փիլիսոփայության պատմություն» և «Փիլիսոփայության պատմությունը ՍՍՀՄ-ում» բազմահատոր կոլեկտիվ աշխատությունների պատրաստման գործին, գրելով դրանց հայ փիլիսոփայությանը վերաբերող գլուխները։ Միաժամանակ նա գրել է մի շարք հոդվածներ հայ փիլիսոփաների մասին «Սովետական մեծ հանրագիտարանի», «Փիլիսոփայական հանրագիտարանի» և միութենական ու հանրապետական այլ հրատարակությունների համար։

Մեծ են Վ. Զալոյանի ծառայությունները նաև գիտական կադրերի, փիլիսոփա-պատմաբանների պատրաստման գործում, որոնք այժմ աշխատում են հանրապետության տարբեր գիտական օջախներում՝ շարունակելով իրենց ուսուցչի շնորհակալ գործը։ Հայրենիքը բարձր է գնահատել Վ. Զալոյանի վաստակը։ Նա ընտրվել է ՀՍՍՀ ԴԱ թղթակից անդամ (1965), նրան շնորհվել են ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի և Մաշտոցի անվան մրցանակի դափնեկրի պատվավոր կոչումները։ Նա պարգևատրված էր «Պատվո նշան» շքանշանով և մի շարք մեդալներով։

Վ. Զալոյանի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա սովետահայ գիտության պատմության մեջ, նրա աշակերտների, գործընկերների և ընթերցողների սրտերում։

ՍԵՆ ԱՐԻՎՇԱՏՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր